

# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

\_\_\_\_\_ 2024 թվականի N \_\_\_\_\_ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1174-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1174-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 10-րդ կետում «<մեկ>> բառը փոխարինել «<երկու>> բառով.

2) հավելվածի 13-րդ կետի առաջին նախադասությունում «<առաջ>> բառից հետո լրացնել «<վարժական հավաքի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում պահեստազորայինների>> բառերը, իսկ «<նպատակով>> բառից հետո լրացնել «<(N 1.1 ձև)>> բառերը.

3) հավելվածի 14-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունում «<հիման վրա>> բառերից հետո լրացնել «<(N 1.1 ձև)>> բառերը, իսկ «<դեպքերում>> բառերից հետո լրացնել «<N 1 ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա>> բառերը,

բ. երկրորդ նախադասությունում «<կամ ծառայողական>> բառերը հանել.

4) հավելվածի 30-րդ կետի երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«<Հայտարարվող զինվորական վարժանքների կամ զորավարժությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական կոմիսարիատը զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով պահեստազորայինին ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու համար (N 3.1 ձև), որի հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստազորայինը սահմանված կարգով անցնում է բուժհետազոտում և դրա արդյունքներով անցկացվող միջոցառմանը ներգրավվելու ենթակա ճանաչվելու դեպքում N 3 ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա ուղարկվում է միջոցառման

անցկացման գործնական շարժումները՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով:»:

5) հավելվածի 40-րդ կետի երկրորդ նախադասությունում «կամ ծառայողական» բառերը հանել:

6) հավելվածը N 1 և N 3 ձևերից հետո համապատասխանաբար լրացնել N 1.1 և N 3.1 ձևերով՝ համաձայն ձև 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ Ն. Փաշինյան

Ձև 1

«Ձև N 1.1

Քաղաքացի \_\_\_\_\_  
Բնակության վայրը \_\_\_\_\_

### ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի \_\_\_\_\_ -ից մինչև 20 թվականի \_\_\_\_\_ -ը անցկացվող վարժական հավաքի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման:

Անհրաժեշտ է 20 թ. \_\_\_\_\_-ի \_\_\_\_\_-ին ժամը \_\_\_\_\_-ին ներկայանալ (ամիսը) (օրը)

\_\_\_\_\_ զինվորական կոմիսարիատ հետևյալ՝  
հասցեով՝ \_\_\_\_\_

վարժական հավաքին ներգրավելու նպատակով Ձեր զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար:

\_\_\_\_\_ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ \_\_\_\_\_

(գինկոմիսարիատ) (ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

### ՍՏԱՑԱԿԱՆ

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թվականին գինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման համար գինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝

\_\_\_\_\_ :  
(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:□:

ՁԱ 2

«ՁԱ N 3.1

Քաղաքացի \_\_\_\_\_  
Բնակության վայրը \_\_\_\_\_

### ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Չինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի \_\_\_\_\_ -ից մինչև 20 թվականի \_\_\_\_\_ -ը կազմակերպվող

\_\_\_\_\_ (միջոցառման անվանումը)

կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում գինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման: Անհրաժեշտ է 20 թ. \_\_\_\_\_-ի \_\_\_\_\_-ին ժամը \_\_\_\_\_-ին ներկայանալ (ամիսը) (օրը)

\_\_\_\_\_ գինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (միջոցառման անվանումը)

Ներգրավվելու նպատակով Ձեր գինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար:

\_\_\_\_\_ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ \_\_\_\_\_  
(գինկոմիսարիատ) (ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

---

ՍՏԱՑԱԿԱՆ

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թվականին զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժիետագոտման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝

\_\_\_\_\_ :  
(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:□: